




ՀԱՅՈՑ ՊԱՏԱՐԱԳԻ ՀԱՏԿԱՆՇՈՒԿԱՆ ԳԾԵՐԸ՝
ՀԱՄԵՄԱՏՎԱԾ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄՅՈՒՍ ՊԱՏԱՐԱԳՆԵՐԻ
ՀԵՏ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

Մի կողմից հայկական պատարագի և բյուզանդական ծեսերի պատարագների նմանությունների և ընդհանուր տարրերի վերլուծությունից և մյուս կողմից՝ հայկական պատարագի վրա արևմտյան պատարագների ազդեցությունների վերլուծությունից առաջացան մի շարք տարբերություններ կամ տարրեր ևս, որոնց չենք հանդիպում տվյալ ձևով ոչ մի այլ պատարագներում: Այդ տարրերը հանդիսանում են հայկական պատարագի յուրահատուկ տարրերը:

Տարբերակիչ այս տարրերից ոմանց ծագումը շատ հին է: Դրանք անհետանում են ժամանակի մշտյի մեջ: Խոսքը վերաբերում է այն տարրերին, որոնք գալիս են բացահայտորեն եկեղեցու նախկին պատարագից և որոնք հայկական պատարագին տալիս են յուրահատուկ բուրմունք: Այդ տարրերը հանդիսանում են հայկական ոգեկանության սեփական ստեղծագործությունները, որոնք նպաստեցին այս ձևով հայկական պատարագի յուրահատկությանը և է՛լ ավելի ընդգծմանը: Այդ ստեղծագործությունների հեղինակներն են հայ հոգեվոր կյանքի մի շարք նշանավոր անձնավորություններ:

Ստորև կփորձենք բացահայտել եթե ոչ բոլոր, գոնե յուրահատուկ այդ տարրերի մի զգալի մասը, որը հայկական պատարագին տալիս է առանձին ինքնուրույնություն քրիստոնեական մյուս պատարագների հա-

մեմատությամբ, չնայած որ իր էությամբ հայկական պատարագը նման է մյուս պատարագներին:

1.—Հայկական պատարագի տարրեր «Սպաս դնելոյ կանոն»-ում.

Ի տարբերություն բյուզանդական ծեսի, որի մեջ «Սպաս դնելոյ» կանոնը ժամանակի ընթացքում զարգացել է՝ վերածվելով առանձին մի արարողության, մի տեսակ նախապատարագի, «օրհնութեամբ» սկսվող աղոթածևով և վերջին՝ փակման աղոթքով, որից հետո պատարագիչները, նախքան պատարագի սկսվելը, նորից են երկրպագում՝ սկսելու համար մի նոր արարողություն հայկական ծեսում. «Սպաս դնելոյ» կանոնը հանդիսանում է ս. պատարագի ընծաների պատրաստության մի պահ, որը պատարագի բուն կորիզն է: Այսպես, «Սպաս դնելոյ» կանոնի սրբագործված ըստ պաշտենքն են մաղգման, սկիհը և մեկ ծածկոց՝ երկուսի համար: «Սպաս դնելոյ» կանոնի խորհրդանշող հայկական ծեսում մնաց այն, ինչ որ էր նախնական շրջանում նաև բյուզանդական պատարագի մեջ, այսինքն Տիրոջ մահը խաչի վրա:

Բյուզանդական ծեսում օգտագործված «աստղիկը», (Steluta), որ խորհրդանշում է Տիրոջ ծնունդը Բեթղեմեմի այրում, չի օգտագործվում հայկական ծեսում: Նույնպես չի օգտագործվում «փոքրիկ գեղարդը» (Copia), որը ներմուծվել է բյուզանդական «Սպաս դնելոյ» կանոնում է—

Ը դարերից հետո, որպես արդյունք այս կանոնի զարգացման, և հատկապես այն շրջանում, երբ որոշեցին նշխար բեկանելու և նրա բեկանված «մասը», մաղձմալի վրա դնելու այլ փոքրիկ մասնիկներով՝ ի հիշատակ ս. Աստվածածնի, արքերի և կենդանի ու հանգուցյալ հավատացյալների: Եվ, ինչպես նկատելի է, հայկական ծեսում պատարագիչը սուրբ հաղորդություն տալիս է հավատացյալներին իր երկու մատներով, ուղղակի սկիհից վերցնելով գինով թաթախված նշխարի մի մասնիկը՝ այն դնելով հավատացյալի քերամը: Այդ իսկ պատճառով հայկական ծեսում չի օգտագործվում նաև գդալը, որն օգտագործվում է բյուզանդական ծեսում հաղորդության ժամանակ: Ի դեպ «աստղիկը» ու «գեղարդը» չեն օգտագործվում նաև արևելյան ծեսերի մեջ ևս: Սակայն հայկական պատարագին յուրահատուկ է «ոչ խմորեալ հացի», ինչպես և «անապակ գինու» օգտագործումը: Հայ եկեղեցու այս սովորությունը թվում է, թե շատ հին է: Հույների Զ «տիեզերական» ժողովը (692 թ.) իր կանոնների (32, 33, 56, 99) մեջ նկատողություն է անում հայերին, որ նրանց մոտ չկա «Սպաս դնելոյ» կանոնի «անխմոր հացի» գործածությունը, այլ միայն «անապակ գինու» օգտագործումը: Սակայն այդ երկու կանոնների գոյությունը թվում է, թե շատ ավելի հին շրջանից է: Մովսես Եղիվարդեցի Հայոց Հայրապետը (574—604) հույներին այդ մասին գրել է. «Քա լիցի ինձ... ուտել գեպեալն ի փոան և ըմպել զջերմ բաժակն»: Սվեյի ու Տարսունի ժողովը (1196—1197) կարիք է զգում արդարացնելու հայ եկեղեցու այս սովորությունը, որից բյուզանդացիները պահանջել էին հրաժարվել, իսկ արդարացումը կատարվում է՝ վկայակոչելով հայոց այդ սովորության նմանությունը հռոմեական եկեղեցու ծեսի հետ: «Անխմոր հացը հավասարապես օգտագործում է միաժամանակ հռոմեական եկեղեցին, և մենք պետք չէ հրաժարվենք դրանից», սակայն «սկիհում պետք է ավելացնենք մի քանի կաթիլ ջուր»: Ինչպես երևում է, տեղական այդ ժողովին ներկա եղող հայ հոգևորականները հոժար են որոշ զիջողություններ անելու բյուզանդացիներին՝ գինու մեջ խառնելու մի քանի կաթիլ ջուր, մի պարագա, որը նրանք համարում էին նվազ կարևորություն ունեցող երևույթ, սակայն ոչ մի դեպքում չհամաձայնվեցին խմորում հացի օգտագործմանը անխմոր հացի փոխարեն, սովորություն, որ հաստատված է փաստականորեն դեռևս Զ դարում, երբ խոսք չէր կարող լինել հայկական պատարագի վրա որևէ ազդեցու-

թյան մասին: Հետևաբար հայ եկեղեցու օգտագործած անխմոր հացի սովորությունը որևէ կապ չի կարող ունենալ կաթոլիկ եկեղեցու օգտագործած անխմոր հացի սովորության հետ, չնայած որ որոշ մարդիկ հակված են տեսնելու արևմտյան եկեղեցու ազդեցություն հայկական պատարագի վրա:

Պետք է ասել նաև, որ հայկական ծեսում օգտագործված անխմոր հացի ու անապակ գինու գործածությունը բոլորովին չունի միաբնակ վարդապետության իմաստ, ինչպես այդ փորձել են պնդել որոշ բյուզանդացի աստվածաբաններ, քանի որ հայ եկեղեցու դավանաբանական վարդապետությունը մնաց միշտ անքիժ, որպես ուղղափառ միաբնակ վարդապետություն: Եթե հայերը պահեցին անխմոր հացի ու անապակ գինու օգտագործման սովորությունը, դրա պատճառը նրանց ավանդապահությունն է և ոչ թե դավանաբանական որևէ նկատառում, ինչպես որ դա երևում է Ներսես Լամբրոնացու ճառից՝ արտասանված Տարսունի ժողովում: Այդ սովորությունը պետք է լինի տեղական բնույթ ունեցող մի սովորություն, այնպես, ինչպես այդպիսի շատ սովորություններ գոյություն ունեին նախնական եկեղեցում, և որոնք, սակայն, ի վիճակի չեղան քանդելու նախնական քրիստոնեության սերտ ընդհանրությունը ու քույր եկեղեցիների միջև գոյություն ունեցող խաղաղությունը:

Հայկական պատարագի սկզբի առանձնահատկություններից մեկն է նաև, իր ներկայիս ծեսի մեջ ևս, փառավոր շարականը «Խորհուրդ խորին...», որ երգում են դպիրները պատարագիչ քահանայի զգեստավորման ժամանակ, ինչպես և ջերմ բարեպաշտությամբ լի այն երկու աղոթքները, որ կարդում է ընդհանրապես եպիսկոպոսը ս. Սեղանի առաջ, ծնրադիր, նախքան «Սպաս դնելոյ» կանոնը:

«Խորհուրդ խորին» շարականի հեղինակը խաչատուր վրդ. Տարոնեցին է (ԺԳ դար): Այդ շարականը շատ վաղ ունեցել է պատարագային կիրառում: Աղոթքը «ի դէմն Հօր Աստուծոյ» է, «որ զարդարեցեր գվերին պետութիւնդ, ի յառազաստ անմատոյց լուսոյն գերապանծ փառօք զդասս հրեղինաց: Անճառահրաշ զօրութեամբ ստեղծէր գԱդամ պատկեր տիրական, և նազելի փառօք զգեստաւորեցեր, ի դրախտն աղենի տեղի քերկրանաց: Չարչարանօք քո սուրբ Միածնիդ նորոգեցան արարածք ամենայն, և վերստին մարդն անմահացաւ, զարդարեալ ի զգեստ անկողողպտելի»:

Ծարականի հաջորդ խոսքերը հայցում են երկնային Հայր Աստուծոյ սուրբ Հոգու առաքումը ս. Սեղանի ծառայողների վրա:

«Հեղ և ի մեզ Հոգիդ սուրբ Աստուած, ընդ պատմութեանիս գրո զիմաստութիւն», և ապա շարունակվում է. «Իսամամբ թագ ի գլուխ պատեցես զմիտս և զգայարանս, խաչանիշ ուրարմամբ ըստ Ահարովնի ծաղկեալ յուկեթել ի զարդ խորանին. բամից բոլորից տիրապէս աստուածպետական նախորատապար սիրով զմեզ զգեստաւորեցեր. քում սուրբ խորհրդոյդ լինել սպասաւոր»: Եւ վերջանում է. «Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա. և զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան»:

Այնուհետև հաջորդում են ս. Գրիգոր Մարեկացու (951—1003) երկու աղոթքները՝ «ի դէմս սուրբ Հոգւոյն»: Առաջին աղոթքը մի խոր խոստովանություն է սուրբ Հոգու աստվածությանը, որի սրբագործիչ զորությունը նորից է ստեղծում մարդկանց. «Քն ստեղծանին ի նորոգութիւն յարութեան՝ յայնմ ժամանակի, որ է օր վերջին այսմ կենցաղի, և օր առաջին երկրին կենդանեաց»: Աղոթքի երկրորդ մասը մի աղերսանք է, դարձյալ ուղղված սուրբ Հոգուն, որ «զմեղուցեալս մաքրես և տանարս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց... և յարդարեացես զմեզ օթեանս պատուականս ամենայն պատրաստութեամբ ի վայելումն ճաշակման երկնաւոր Գաղինդ, առանց պատժոց դատապարտութեան ընդունել զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեան»:

2.—Հայկական յուրահատուկ տարրեր «Երախայից պատարագ»-ի մեջ.

Հայկական և բյուզանդական ծեսերի «Երախայից պատարագ»-ների միջև կան որոշ տարբերություններ, որոնք ցույց են տալիս, թե հայկական պատարագի ձևը շատ ավելի պարզ է ոչ ծախալուն այն մասում, որը վերաբերվում է սարկավագների քարոզներին:

ա) Փոքր «Վերաբերում»-ի ընթացքում, որ ավելի պարզ է, քան բյուզանդական ծեսում, երբ երգչախումբը երգում է «Սուրբ Աստուած»-ը, որ «ի դէմս Որդւոյն Աստուծոյ» է, այն հայկական, որ հանդիպում է նաև արևելյան մյուս հին եկեղեցիների պատարագներում ևս, երբ սուրբ Ավետարանը կրող սարկավագը հասնում է խորանի մեջտեղը, դեպի ժողովուրդը դարձած, դատում գտնվող երիցագույն հոգևորականը կամ հավատացյալներից պատկառելի մեկը, հանում ողջ համայնքի, գալիս է և համբուրում սուրբ Ավետարանը՝ ի նշան հարգանքի: Այս ակտն արտահայտությունն է նաև հավատացյալների ակտիվ մասնակցությանն ամբողջ սուրբ պատարագի խորհրդին:

բ) Աստվածաշնչական ընթերցումների ժամանակ, որոնք, ի տարբերություն բյուզանդական ծեսի, հայկական ծեսում, ինչպես նաև արևելյան մյուս պատարագներից շատերի մեջ, ընդհանրապես երեքն են. երկուսը՝ Նոր Կտակարանից, իսկ մեկը՝ Հին Կտակարանից: Հայոց պատարագին յուրահատուկ է նաև այն իրողությունը, թե սարկավագի «Պրօսխումէ» (հունարեն բառ, որ նշանակում է «ունկնդրենք») անելուց հետո երգչախումբը, ընդգծելու համար հիշյալ պահը, հրավիրում է ժողովրդի ուշադրությունը՝ պատասխանելով «Ասէ Աստուած»: Այս ձևով տեսնում ենք, որ հավատացյալները պետք է ուշադրությամբ ունկնդրեն հաջորդող խոսքերը, որովհետև դրանք Տիրոջ և մեր Փրկչի Հիսուսի Քրիստոսի՝ Աստուծո Որդւոյն խոսքերն են:

3.—Հայկական յուրահատուկ տարրեր «Հաւատացելոց պատարագ»-ի մեջ.

ա) Ներկայիս հայկական պատարագին հատուկ է նաև «Հաւատոյ հանգանակ»-ի կամ «Հաւատամք»-ի արտասանությունն անմիջապես սուրբ Ավետարանի ընթերցումից հետո, այսինքն այն պահին, երբ վերջանում է «Երախայից պատարագ»-ը և սկսվում «Հաւատացելոց պատարագ»-ը:

Մինչև ԺԱ դարը հայոց եկեղեցու «Հաւատամք»-ն ասվում էր «ողջոյն»-ից հետո, ինչպես արևելյան մյուս պատարագածեսերում: Ուրեմն ներկայիս «Հաւատամք»-ի տեղը հայկական պատարագում առանձին մի երևույթ է արևելյան մյուս հին ծեսերի մեջ: Սակայն այս մանրամասնության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ քրիստոնեական ոչ մի այլ պատարագում, բացի հայկական պատարագից, չկա սարկավագի հայտարարությունը. «Իսկ որք ասենն էր երբեմն յորժամ ոչ էր Որդին, կամ էր երբեմն յորժամ ոչ էր սուրբ Հոգին, կամ թէ՛ յոչ էից եղեն, կամ յայմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ և կամ զսուրբ Հոգին, և թէ՛ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ կաթողիկէ և առաքելական սուրբ եկեղեցի»:

Այս հայտարարությունը, իսկական ուղղափառ իմաստով, արտահայտում է հայ եկեղեցու անաղարտ ուղղափառ հավատքի նկատմամբ հաստատուն սերը և նրա գործածության հնությունը, որը, ըստ երևույթին, նույնանում է «Հաւատոյ հանգանակ»-ի պատարագի մեջ ներմուծման հնության հետ (Ե—Ձ դդ.), երբ քրիստոնաբանական և ս. Հոգու մասին եղած հերետիկոսությունները սպառնալիք էին հանդիսանում ուղղափառության համար:

բ) Հայերին առանձնահատուկ է նաև «Հաւատամք»-ին հաջորդող ս. Գրիգոր Լու-

սավորչի աղոթքը, որն արտասանում է պատարագիչը, որպես պսակ «Հաւատոյ հանգանակ»-ի. «Իսկ մեք փառաւորեցուք որ յառաջ քան զյախտեան երկիր պագանելով սրբոյ Երրորդութեան և մի աստուածութեան Հօր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ...»:

գ) Հայկական պատարագում «Հաւատացեոց պատարագ»-ի սկզբնական մասն առանձնահատուկ գծերից մեկն է նաև սարկավագի քարոզը՝ ուղղված նրանց, ովքեր իրավունք չունեն ներկա լինելու սուրբ պատարագին, որ արդեն մոտենում է. «Մի՛ որ յերախայից, մի՛ որ ի թերահաւատից և մի՛ որ յապաշխարողաց և յանմաքրից մերձեցի յաստուածային խորհուրդս»: Սարկավագի այս «քանաձևը» պետք չէ շփոթել բյուզանդական ծեսի «Երախայից պատարագ»-ի վերջին մասի հետ և կամ արևելյան մյուս պատարագների ծեսի համապատասխան մասի հետ, որոնք հնում հիշեցնում էին չմկրտվողների հեռացումը եկեղեցուց և հավատացյալների մնալը շարունակաբար եկեղեցում: Հայկական ծեսում սարկավագի այդ կոչը շատ ավելի բովանդակալից է՝ նկատի ունենալով ոչ միայն չմկրտվողներին, այսինքն նրանք, որ նախապատրաստական վիճակում էին՝ ընդունելու համար մկրտության խորհուրդը, այլև թերահավատներին, որոնց մաս էին կազմում հավանաբար հեթանոսները, որոնք մոտիկից հետաքրքրվում էին քրիստոնեությանը՝ հասկանալու համար քրիստոնեությանն նշանակությունը, որպեսզի կարողանան որոշում տալ չմկրտվողների շարքն անցնելու համար: Սարկավագի կոչը վերաբերվում է նաև հավասարապես ապաշխարողներին, որոնք մեղքեր գործելու պատճառով զրկվել էին շնորհից, և որոնք այժմ ապաշխարում էին, ինչպես նաև բոլոր նրանց, ովքեր իրենց խղճի առաջ անարժան էին աստվածային խորհրդին: Սա հայ եկեղեցու բացառիկ հոգատարությունն է, որը զգացվում է դեպի հավատացյալ նրա զավակները՝ միշտ ուղղություն ցուց տալու, ինչպես նաև բոլոր նրանց հանդեպ, ովքեր լավ են տրամադրված դեպի եկեղեցին:

Աստվածային խորհրդի հետ չի կարելի հեշտությամբ վերաբերվել: Հայ եկեղեցին միշտ իր հոգևոր զավակներին դաստիարակել է խոր հարգանքի գիտակցությամբ՝ հանդեպ աստվածային խորհուրդների սրբությանը:

դ) Հայկական պատարագում չկան հավատացյալների համար աղոթքներ, ինչպես դրանք կան բյուզանդականի մեջ: Եկեղեցական երգչախումբն առանց նախաբանի երգում է «Մարմին տերունական և արին

փրկչական կայ առաջի, երկնային զօրութիւնքն յաներևոյս երգեն և սանն անհանգիստ քարքառով. Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ Տէր զօրութեանց» երգը՝ առանց հավատացյալների համար նախորդող մի աղոթքի: Այս երգը մեզ պետք չէ հանգեցնի այն կարծիքին, թե հայ եկեղեցում ս. հաղորդության տեսակները (հացը և գինին) համարվել են դեռևս իրենց ընծայման պահից որպես «Մարմին և Արին Տեառն մերոյ»: Երգի իմաստը կարելի է համեմատել բյուզանդական ծեսում սրբասացության վերջին բաների հետ. «Որպես թագավոր ամենեցուն ընդունենք նրան, որ շրջապատված է աներևութապես հրեշտակների բազմությամբ, որոնք գոչում են. Ալե՛լուիա, ալե՛լուիա, ալե՛լուիա»:

ե) Հայկական ծեսին հատկանշական են նաև «Վերաբերում» անող քահանայի (և կամ սարկավագի) արտասանած սաղմոսի խոսքերը, սուրբ խորհուրդը դեպի սեղանը բերելիս. «Յարևո եհար զխորան իոր» և այլն... (սաղմոս ԾԸ 6), ինչպես նաև քահանայի ու սարկավագի սաղմոսի փոխասացությունը. «Համբարձէ իշխանք զդրոմս ձեր ի վեր»... և այլն (սաղմոս ԻԳ 10): Այս իրողությունն ընդգծում է հայ եկեղեցու տեղական հին սովորությունը, մի բան, որին չենք հանդիպում այլ պատարագների ծեսերում:

զ) Պատարագչի ձեռքերի լվացումը, «Վերաբերում»-ից անմիջապես հետո, ինչ սաղմոսի ծածուկ արտասանությամբ, եկեղեցու հին և ընդհանուր պատարագից պահպանված մի սովորություն է, նախքան Ե—Զ դարերը:

է) Ծածկոցի կիսով չափ բացումը սկիհի վրայից, «որպեսզի երևեսցի նշխարն», երբ պատարագիչն ասում է. «Ծնորհօք և մարդասիրութեամբ», նախքան «ողջոյն»-ը:

ը) Նախքան «ողջոյն»-ը սարկավագի խոսքերը. «Ողջոյն տուր միմեանց ի համբոյր սրբութեան և որք ոչ էք կարողք հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ դրոմս ելէք և աղօթեցէք», հավասարապես ընդգծում է հայկական պատարագի յուրահատկությունը: Այս խոսքերը ոչ միայն մի կոչ են հավատացյալներին ուղղված՝ պահելու համար սիրո միությունը, այլև որպեսզի նրանք միակամ խոստովանեն «զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին», ինչպես տեսնում ենք այդ բյուզանդական ծեսում:

«Ողջոյն»-ի համբույրը Գրիստոսի կյանքի կատարելության կնիքն է, և որի նպատակն է՝ բոլոր արժանավոր հավատացյալներին միավորելու ամուր և մեկ համակեցության մեջ, սուրբ Խորհրդով հաղորդվելու համար:

Ահա թե ինչու «ողջուն»-ի համբույրից զրկվում են անարժանները, երբ երգվում է «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»-ը, երգ, որը լրիվ չափով արդարացնում է այս իրողությունը. «Որ էնն Աստուած աստ բազմեցաւ: Խաղաղութեան ձայն հնչեցաւ, սուրբ ողջունի հրաման տուաւ: Թշնամութիւնն հեռացաւ, սէրն լընդհանուրս սփռեցաւ: Արդ, պաշտօնեայք, բարձեալ զձայն, տուր զօրհնութիւն ի մի բերան, միասնական աստուածութեանն, որում սրովբէքն են սրբաբան»:

Այս պահին անարժանները պետք է հեռանան եկեղեցուց, ինչպես հնում անում էին չմկրտվողները հավարտ «Երախայից պատարագ»-ի:

«Ողջուն»-ի երգը լրիվ հաստատում է վերոհիշյալ կանոնը:

թ) Հայկական ծեսի առանձնահատկություններից մեկն է նաև ս. հաղորդության անաֆորայի ժամանակ, չնայած բյուզանդականի հետ նրա ունեցած ընդհանրությանը, մի քանի կետերի տարբերություններ: Այսպես, օրհնակ, մինչ պատարագիչն արտասանում է Տիրոջ խոսքերը՝ Վերջին ընթրիքի ժամանակ, այն է՝ «Առէք կերէք» և ապա «Արբէք ի սմանէ»-ն, նա ոչ միայն մատնանշում է հացն ու գինին, ինչպես այդ արվում է բյուզանդական ծեսում, այլև դրանք (հացն ու գինին) վերցնում է ձեռքը՝ դրանով ավելի ևս նմանեցնել ջանալով Տիրոջ շարժումը վերջին ընթրիքի ժամանակ:

ժ) «Բարեխօսութեան» աղոթքները ցույց են տալիս դարձյալ հայկական պատարագի բնույթը՝ դրանց մեջ առաջադասելով հայ ժողովրդի առաջին ավետարանիչների և առաջին լուսավորիչների, ինչպես նաև հովիվների ու հովվապետների անունները: Ապա հիշատակվում են քրիստոնեական եկեղեցու միայնակյացների ու անապատականների անունները՝ ավելացնելով նաև հայ եկեղեցու անապատականներին և միայնակյացներին, և ապա, հիշատակելով Աբգար և Տրդատ հայ թագավորների հետ նաև հույն Կոստանդիանոս ու Թեոդորոս թագավորներին, որոնք

չեն հիշվում ուրիշ ոչ մեկ այլ պատարագածեսում:

ժա) Հայկական ծեսին հատուկ է նաև «Ի սրբութիւն սրբոց»-ից հետո հաջորդող «Օրհնեալ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ» և «Օրհնութիւն և փառք Հօր...» պատարագի կողմից ասված այս օրհնանքը:

ժբ) Հայկական պատարագին հատուկ են նաև. 1. «Ի սուրբ ի սուրբ»-ի ժամանակ այն պահը, երբ պատարագիչը, իր մատների մեջ բռնած Տիրոջ Մարմինը (սուրբ ճշմար), սկիհից ավելի բարձր, ի տես ժողովրդյան, դառնում է դեպի հավատացյալ ժողովուրդը և ասում. «Ճաշակեցուք սրբութեամբ, որ իջեալ ի յերկնից բաշխի ի միջի մերում»: 2. Ապա սուրբ Խորհրդով ժողովրդին օրհնելը և ասելը. «Սա է կեանք, յոյս, յարութիւն, քաւութիւն և թողութիւն մեղաց: Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ, սաղմոս ասացէք երկնաւոր թագաւորիս մերում անմահի՛ որ նստի ի կառս քերովբէական»:

ժգ) Հայկական ծեսին հատուկ է, ի վերջո, հավատացյալների՝ ս. հաղորդությունը ընդունելու եղանակը: Պատարագիչ քահանան սուրբ հաղորդությունը վերցնում է սկիհից իր երկու մատներով, ս. Արյան մեջ թափախված Մարմնից մի մասնիկ դնելով հաղորդվողի բերանը, ինչպես նաև ս. հաղորդությանը հաջորդող պատարագի ավարտական մասի լայն ծավալումը, որը կոչված է՝ ընդգծելու գոհաբանական ըզգացմունքների արտահայտությունը՝ «Գոհանամք զքէն» երգով, հոգևորականության և ժողովրդի ս. Խորհուրդներով (ս. Մարմնով և ս. Արյունով) հաղորդվելու համար:

Այնուհետև սուրբ հաղորդությանը հետևելով հաջորդական աղոթքներն ու երգերն ընդգծում են հաղորդվող դասի ու հավատացյալների գոհության զգացմունքների արտահայտությունը, սուրբ հաղորդությունը ստանալու համար: Ս. պատարագի այս մասը շատ ավելի ամփոփ է բյուզանդական ծեսում:

ԶԱՐԵՀ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ
ՊԱՐՈՆՅԱՆ

Բուխարեստ

